ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի, 2024 թվականի № 41-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 88-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը, ինչպես նաև «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի 2024 թվականի ապրիլի 30-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված N 11/24 գրությունը և հաշվի առնելով «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 88-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ Ընկերության 2024 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների նախահաշիվը՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:
2. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 88-Լ որոշման № 2 հավելվածով հաստատված՝ Ընկերության 2024 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:
3. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 88-Լ որոշման № 3 հավելվածով հաստատված՝ Ընկերության 2024 թվականի տարեկան դրամական հոսքերի նախահաշիվը՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

3 հունիս, 2024 թվականի

ք. Երևան